



54. ԳԱՅԼԻ ՓՈՐՁԱՆՔՆԵՐ

Գյել մի կէղի, գյել շատ կանոթնա, իրեք օր կը պըտոտա, պան չը կըպի ծեռ:

Էն մեկ օր կէրթա չուլի մեչտեղ, էժ մի կը տեսի, կասա. - Վուլա՛հ, Աստըված իմ կղըսմաթ խասուց:

Կէրթա, իծուն կը մոտնա, էժ կը փախի: Կը լարա, զէժ կը պըռնա:

Կասա. - Է՛ժ, դու իմ ծեռնեն դո՞ր կը պըռծիս: Հէսօր իրեք օր ես անոթի եմ: Անպատճառ պըտի քեզի ուտեմ հէսօր:

Էժ գյելուն կասա. - Կը խընթեմ քեզնե, ես էրկու խատ էլ ուլ ունիմ, էրթամ իմ ուլերն էլ բերեմ, իրեքս էլ մեկտեղ կե՛ր: Ափսոս ի, իմ ուլեր մընան էթիմ, անմեր:

Գյել կասա. - Դե՛, գընա՛, շո՛ւտ տարցի արե՛: Ես հէսօր իրեք օր անոթի եմ:

Էժ կէրթա, զուր ուլեր կառի, փախի, կու գա՛ գյել: Գյել չուր հիրիկուն կը նըստի դանի: Էժն էլ նո՞ր կու գա՛:

Էժն օրթա կէրթա, կաչքա ուր կոտըշներու վըրեն, կասա. - Ընձի պես ախշըրքի մեչ ասլան մարթ չըկա: Ես գյելուց պըռծա, էկա:

Գյել կէրթա, էն գիշեր կը մընա, խըլըսուն կէլի, էրթա չուլի մեչտեղ, տեսի, օր կողչ մի, կէրթա կողչու մոտ, կէրթա, միամիտ գկողչ կը պըռնա:

Կասա. - Կղո՛չ, հէսօր չորս օր էղավ՝ ես անոթի եմ, անպատճառ պըտի ես քեզի ուտեմ:

Կողոչ կը մեզան, գյելուն կասա. - Գյե՛լ,- կասա,- կայնի՛, ես էրթամ էնդեխեն խաղամ ու գան, նոր ընծի կե՛:

Կողոչ կերթա, էնդեխեն խաղալեն կուգան, մեկ քալլե մի գյելու գըլխուն կը գանի: Գյելու խելք կերթա, գյել կընգի գետին:

Կողոչ կը փախի, ագանտվի, էրթա: Գյել կը մընա էնտեղ, մինչև օր խելք կուգան վըրեն, կեղի հիրիկուն:

Գյել մեկել խեղճ կելի, էրթա, կը մըտի ուր ծակ: Էն խըլըսուն գյել կելի, կերթա ծի մի կը քըթի, ծին չայրի մեչտեղ առծըցեր, էմալ ա խոստըցեր, օր քեյ ինչ պիտի:

Գյել կասա. - Վուալա՛, ես հեսօր պըտի էրթամ, էսա ծին ուտեմ, հըմենի տեղն էլ կելի:

Կերթա ծիու մոտ, կասա. - Ձի՛, պըտի քեզի ուտեմ:

Կասա. - Կուտես, դո՛ւ գիտես, ես ի՞նչ էնեմ: Հեն օր, օր իմ խեր ընծի թողեր ա էստեղ, ընծի ասեր ա՝ քո օտաց տակ նշան մի կա: Էն նշան օր էկավ, խասավ հիրուր, քու օր կը լըմենա: Գնա՛, էտեվանց աչքա՛, տես, ես իմ օտ կը վերում, օր նշան խասեր հիրուր, ընծի կե՛ր:

Գյել կերթա հետեվանց, ծին կաչքա՝ գյել դեմ կայներ ա, գըօտ կը վերու, չուֆթե մի գյելու ճակտի մեչտեղ կը գանի: Գյելու խելք կերթա, գյել կընգի էնտեղ: Ձին կագանտվի, էրթա:

Օրն էլ հըմալ անծրև օր մ' ա, նախորոթ փախե, գացե, մըտե գյելու ծակ: Գյելու խելք կու գան վըրեն, գյել կասա. «Էլիմ, էրթամ, մըտիմ իմ պնան մեչ, իմ պնան մեչ խատիմ»:

Գյել ուշիկ-ուշիկ կելի, էրթա, մըտի ուր ծակ: Ինք ուրին-ուրին կասա. «Ջա՛նըմ, էս ի՞նչ խելք էր՝ ես պանցուցի, ես գանցի, գտա էծ մի, ես ի՞նչ կենեմ էրկուսն ու իրեք, ուտեմ, թըխ մընա չոր օսկըմներ: Աստըված զիմ տուն ավիրա խըտ իմ խելքին: Ես գընանցի, գըտան կողոչ մի, ես ի՞նչ կենեմ խաղ ու խարսնիք, ուտեմ, իմ փոր կըշտանա, պառկիմ: Աստըված իմ տուն ավրի, իմ անգետ խելքին»:

Գյել ախ մի քաշեց, ասաց. «Ես գանցի, գըտան ծի մի, մըկա ես ի՞նչ կենեմ գիր ու նշան, ես ծին ուտեմ, թըխ անուշնա իմ պերան: Ա՛խ, ա՛խ, մըկա մեկ եղեր, զիմ պոչ պըռներ ու գընծի տեր հանճեվ փետի, զիմ օտ ու գըլոխ ճարտեր: Դըռ հալա ընծի քիչ էր»:

Նախորոթն էնտեղեն էլավ, ըզպոչ պըռնեց, ըզգյել տվեց
հանճեվ դըրբի, շիտակ մի ըզգյելու օտ ու գըլոխ ճարտեց ու
փախավ:

Գյելն ասաց. «Աստըված գեշ մարթու տուն ավիրա, մարթ
ուր տան մեջ չըկանա կղըսե՛մ էլ էնա: Համա մարթու գըլխի վըրեն
կայնած ան, կը գանին մարթու օտ ու գըլոխ ճարտեն: Իմ տեղն էս
ա: Ընծի դըռ քիչ ա: Քանի օր սաղ եմ, պըտի իմ տըղի տըղին
թամբիխ էնեմ՝ մինչև իրանց տան չորսբուր շուռ չի գան, էլ
ուրանց տան մեջ կղըսա չենեն»:

Էս էլ գյելու գըլխի գալած փորցանքն ա:

